ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 57/1

27-ը հունվարի 2022 թվականի

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կրթական ծրագրերի ղեկավարների գործունեության կարգը հաստատելու մասին։

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կրթական ծրագրերի ղեկավարների գործունեության կարգը համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված

Հաստատված է
ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի

2022թ. հունվարի 27-ի նիստի թիվ 57/1 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա.Հ. Մակարյան

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետև՝ ԵՊՀ ԻՄ) կրթական ծրագրերի ղեկավարների գործունեության հիմնական ուղղվածությունը ու դրույթները:

1.2. Կարգը մշակված է ՀՀ «Կրթության մասին», ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ կանոնադրությունների, «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման» կարգի (ԵՊՀ գիտական խորհուրդ, 2014), ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքի ու բովանդակության (ԵՊՀ գիտական խորհուրդ 2017), «ԵՊՀ ԻՄ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման» կարգի, Կրթության որակի բնագավառում ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականության (ԵՊՀ ԻՄ գիտական խորհուրդ, 2010), ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման (ԵՊՀ ԻՄ գիտական խորհուրդ, 2021) կարգի, մասնագիտության կրթական ծրագրերի բարելավման, ուսումնական գործընթացների կազմակերպման և կառավարման առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման բնագավառում մասնաճյուղի քաղաքականության (ԵՊՀ ԻՄ գիտական խորհուրդ, 2014) հիման վրա:

2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Կրթական ծրագրի ղեկավարը համապատասխան մասնագիտության պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչ է:

2.2. Կրթական ծրագրի ղեկավարը.

2.2.1. ԵՊՀ ԻՄ-ի հիմնական աշխատող է,

2.2.2. ունի համապատասխան որակավորում,

2.2.3. ունի գիտամանկավարժական աշխատանքի 5 տարվա փորձ,

2.2.4. ղեկավարել կամ մասնակցել է կրթական ծրագրերի մշակման աշխատանքների,

2.2.5. գիտի ՀՀ որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) բնութագրիչները,

2.2.6. գիտի ԵՊՀ ԻՄ-ում գործող ընթացակարգերը, ներքին կարգապահական կանոնները,

2.2.7. տիրապետում է կրեդիտային համակարգի դրույթներին:

2.3. Կրթական ծրագրերի ղեկավարների աշխատանքները համակարգում է ԵՊՀ ԻՄ Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժինը:

2.4. Կրթական ծրագրի ղեկավարի աշխատանքը հաշվարկվում է նրա ընդհանուր ուսումնական բեռնվածության մեջ:

2.5. Կրթական ծրագրի ղեկավարը չի կարող ղեկավարել նույն կրթական մակարդակի մեկից ավելի կրթական ծրագրեր:

3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է.

3.1. Կազմել նոր կրթական ծրագրի մշակման հայտ, որով հիմնավորում է ծրագրի ներդրման և հետագա իրականացման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը:

3.2. Ծրագիրը մշակող աշխատանքային խմբի հետ ձևակերպել ծրագրի նպատակներն ու վերջնարդյունքները՝ որակավորումների ազգային շրջանակի և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

3.3. Կազմակերպել ծրագրի ուսումնական պլանի և փաստաթղթային փաթեթի մշակման գործընթացը:

3.4. Ապահովել կրթական ծրագրի հրապարակայնությունը:

3.5. Կազմակերպել և ղեկավարել կրթական ծրագրին առնչվող որակի ապահովման գործընթացները՝ ԵՊՀ ԻՄ-ի որակի ապահովման համակարգի պահանջներից ելնելով:

3.6. Նախապատրաստել կրթական ծրագիրը ծրագրային հավատարմագրման:

3.7. Անհրաժեշտության դեպքում մասնակցել կրթության որակի ապահովման, ուսումնական և կառավարման գործընթացներին առնչվող կանոնակարգող փաստաթղթերի, մեթոդական նյութերի և զեկույցների պատրաստմանը:

3.8. Կազմակերպել կրթական և ուսումնական գործընթացի, դրանց առնչվող փոփոխությունների վերաբերյալ անհատական ու խմբային խորհրդատվություն և օգնություն:

3.9. Ուսանողներին ներկայացնել նրանց իրավունքներն ու պարտականությունները:

3.10. Աջակցել ուսանողի կամընտրական դասընթացների ընտրության, անհատական ուսումնական պլանի կազմման և ըստ անհրաժեշտության բարելավմանն ուղղված աշխատանքներին:

3.11. Նախապատրաստել և ուսանողներին տրամադրել ուսումնական գործընթացներին առնչվող տեղեկատվական նյութեր:

3.12. Հետևել, որ դասախոսների կողմից ուսանողներին ժամանակին և ամբողջական տրամադրվեն ուսումնական, մեթոդական, քննական և այլ բնույթի նյութեր:

3.13. Հետևել հետազոտական և ավարտական աշխատանքների պատրաստման կարգերի պահանջների պահպանմանը, կատարման ժամանակացույցներին, ահազանգել շեղումների դեպքում աշխատանքների համապատասխան ամբիոնի վարիչին:

3.14. Հետևել ուսանողների առաջադիմությանը և վերլուծել նրանց ձեռքբերումների դինամիկան:

3.15. Մասնակցել ուսանողի ակադեմիական կարգավիճակի, առաջադիմության քննարկման և այլ հանձնախմբերի աշխատանքներին:

4. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ.

4.1. Համապատասխան ամբիոնից և դեկանատից ստանալ ծրագիրն իրականացնող դասախոսներին և ծրագրով ուսումնառող ուսանողներին վերաբերող տվյալներ:

4.2. Անհրաժեշտության դեպքում ստանալ համապատասխան աջակցություն ուսումնական տարբեր ստորաբաժանումների կողմից:

4.3. Ֆակուլտետի գիտական խորհրդի քննարկմանը ներկայացնել ուսումնական գործընթացի բարելավման վերաբերյալ առաջարկներ:

4.4. Ազատորեն օգտվել ԵՊՀ ԻՄ-ի գրադարանի, համակարգչային սրահների, ուսումնական և այլ ստորաբաժանումների ծառայություններից:

4.5. Մասնակցել հետազոտական և ավարտական աշխատանքների պաշտպանություններին:

5. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին կրթական ծրագրերի ղեկավարները Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման և Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժիններին, ֆակուլտետի գիտական խորհրդին և համապատասխան ամբիոնին են ներկայացնում իրենց տարեկան աշխատանքային պլանները (տե՛ս Հավելված 1), իսկ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին՝ գրավոր հաշվետվությունները:

5.2. Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի վարիչի կազմակերպած պարբերական հանդիպումների ժամանակ լսվում են կրթական ծրագրերի ղեկավարների ընթացիկ հաշվետվությունները:

5.3. Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի վարիչը, Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի վարիչը և համապատասխան ֆակուլտետի դեկանը հետևում են կրթական ծրագրի ղեկավարի աշխատանքներին և անհրաժեշտության դեպքում կարող են ուղղորդել:

5.4. Կրթական ծրագրի ղեկավարի աշխատանքի գնահատում ուսանողների կողմից կատարվում է ԵՊՀ ռեկտորատի և ԵՊՀ ԻՄ-ի Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից կազմակերպվող ուսանողական հարցումների միջոցով:

6. ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Սույնը կարգը հաստատում է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը:

6.2. Կարգում փոփոխություններ ու լրացումներ կարող են կատարվել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի որոշմամբ՝

6.2.1. մասնաճյուղի տնօրենի,

6.2.2. գիտական խորհրդի անդամների,

6.2.3. որակի կառավարման մշտական հանձնաժողովի առաջարկություններով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՁԵՎԱԹԵՐԹԻ ՆՄՈՒՇ

N	Աշխատանքներ	Քայլեր	Ժամկետները	Վերջնարդյունք	Կատարողականի ցուցիչներ	Նշումներ
1.						
2.						
3.						
4.						